

389
Դ-52

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՅԻԱԼԻԱՏ. ԽՈՐՃՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳՐԱԴԱՐԱՆԻ բՈՂՈՔ ԱՅՐԱԿՈՆՔ, ՄԻԱՅՆ.

ՅԱ. Ի. ՊԵՐԵՑԼԱՆ

ՆՈՐ ՅԵՎՀԻՒՆ ԶԱՓԵՐԸ

Մետական յափերի առողջա կյան-
քում յեզ գրանց ուսուականին վերա-
ծելու ամենապարզ ձեզեր

Թարգմ. Ա. Շավարշյան



630
106-ՊԵ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — № 163.

ՅԵՎՀԻՒՆ. 1924.

06 APR 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՈԼՈՐ ՅԵՐԱՌՈՒԹՅՈՒՆ, ՄԻԱՅԵՔ

ՅԱ. Ի. ՊԵՐԵՅԼՄԱՆ

630
106-ՊԵ

389

Դ-52
Կ


≡ ՆՈՐ ՅԵՎ ՀԻՆ ≡

≡ ԶԱՓԵՐԸ ≡

Մետական չափեր առողյա կյանքում
յիվ գրանց ռուսականին վերածելու ամե-
նապարզ ձեվերը

1003
10491

Թարգմ. Ա. ՇԱՎԱՐՃՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ—№ 162

ՅԵՐԵՎԱՆ—1924

Ա. Ի. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Մետրական սիստեմի չափերի գործածությունն առաջին անգամ սկսվեց ֆրանսիայում Մեծ Հեղափոխության ժամանակ: Այնուհետեւ XIX-րդ դարում այդ չափերը հետզհետեւ ընդունվեցին շատ յերկրներում, և այսոր 34 յելքոպական ու այլ պետություններում պարտադրաբար գործազրվում են դրանք: Միջազգային դարձած մետրական չափերի զլիսավոր առավելությունն այն է, վոր կազմված են տասնորդական սիստեմով, այսինքն միմյանցից հաջորդաբար մեծ կամ փոքր են 10 անգամ: Այս հանգամանքը չափազանց հաշտացնում է հաշվումը առորյա կյանքում:

1918 թ. Սեպտեմբերի 14-ին Թուսաստանի Ժողկոմիորնը հատուկ դեկրետով ընդունեց մետրական չափերի գործածությունը: Այդ դեկրետի 5-րդ կետը հետեւյալն ե. «Հանձնարարել Լուսժողկոմին միջոցներ խորհնել ծանոթացնելու բոլոր տիպի գպրոցների աշակերտության մետրական սիստեմի չափերի տեսական ու գործնական ամենալայն կիրառման, այլև ժողովրդականացնել դա ամբողջ ժողովրդի մեջ:» Ներկայումս Թուսաստանում կազմակերպված ուժեղ ագիտացիա յև մղվում ի նպաստ մետրական և ի վես ոռուսական չափերի: Անհն բոլոր յերկրներում ոռուսականին զուգընթաց արդեն մուտ են գործում այդ չափերից ամենագործածականները: Յեզ հաղիվ անցնի յերկու կամ յերեք տարի, յերբ գործածությունից իսպառ կը հանվին տեղականները և դրանց կրփոխարինեն բացառապես մետրական միակազմ, պարզ չափերը:

Մեզնում ել սկսվում ե մետրական չափերի կիրառումը: Հայաստանի «Չափերի ու կշիռների պալատը», վորը հիմնվել ե սույն թվի հունվարի 2-ին, ներկայումս ձուլած պատրաստում է զանազան մետրական չափեր մեր հանրապետության պետքերի համար:

Ներկա զրգույշկը հետամտում է միայն Ա. աստիճանի դպրոցների այդ կարիքի բավարարումը: Նոր չափերի իրական մեծությունն իլլյու-

ստրատիվ դարձնելու համար բնագրին ավելացրել ենք մետրական յերկարության չափերի, զրամի, կիլոգրամի, խորանարդ գեցիմետրի և լիտրի նկարները: Բացի այդ, հեղինակի «Метрическая система» աշխատությունից (բ. տպ.) ընդորինակելով զծ. 4, 5 և 8-ը մուծել ենք ներկա թարգմանության մեջ:

Ա. Շ.

Այս բրոշյուրի ներկա տպագրությունը (վորը գլխավորապես ուսումնական նպատակներ ունի), վերարտադրվում է բավականաշափմակած ք. տպագրությունից՝ առանց եական փոփոխությունների:

Չափերի և կշիռների Գլխավոր Պալատը իր հավանությունն և ավել այս բրոշյուրի առաջին տպագրության (1920 թ.):

ՅԱ. ՊԵՐԵԿԱՄԱՆ

1. ՆՈՐ ԶԱՓԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի՞նչն է զրգում մեզ թողնել ուսումնական յերկարության, ծանրության և ծավալի չափերը, վորոնց ընտելացել ենք վաղուց ի վեր և Արևմուտքից առնել մեզ նվազ ծանոթ մետրական չափերը: Ի՞նչ զործնական հարմարություններ ունեն այդ նոր չափերը համեմատած արշիններին, գունացներին:

Նոր չափերը հների նկատմամբ յերկու առավելություն ունեն. առաջինն այն, վոր դրանք միջազգային են, յերկրորդ՝ տասնորդականն Մետրական չափերի մյուս պիտանի կողմերի մասին կիսունք առանձնապես (տես § 16 և 17):

Նոր չափերը միջազգային են, վորովհետև ներկայումս համարյա բոլոր յերկներում և պետություններում (բացի Անգլիայից և Ամերիկայի Միացյալ Նահանգներից) բացառապես զրանք են գործադրվում: Ժողովուրդների մեծ մասը ընդունելով մետրական չափերը^{*)}, վաղուց արդեն թողել ե յերկարության, ծանրության և ծավալի սեփական, ազգային չափերի գործածությունը, դրա շնորհիվ և, վոր տարրեր լեզուներով խոսող և տարրեր զրամաներ ունեցող ժողովուրդները, չնայած այդ հանգամանքին, կարողանում են միանման չափերով ապրանքները բաց թողնել իրար: Խորացիներն ու շվեդները, ֆրանսացիներն ու ֆինները, գերմանացիներն ու բոլգարները չափում են ապրանքները միմնույն չափերով, թեևս այդ ժողովուրդների լեզուն, դրամը, անտեսական կյանքի ձևերը բոլորովին տարբեր են: Այդ ոտար լեզուները դորժածող և ուսումնականին անծանոթ ժողովուրդների միջև մենք ապրում ենք մեկուսի: Այսպիսի անհնապատ մեկուսացումից յեւնելու համար անհրաժեշտ ե մացնել մեզանում միջազգային մետրական չափերի գործածությունը: Սրանով կանենք մի խոշոր քայլ ավելի սերտորեն մերձանալու մյուս ժողովուրդներին:

Մետրական չափերի մյուս կարևոր առանձնահատկությունը — միանել ասունորդական սօսրաբաժանումը — առորյա կենցաղի

^{*)} Կիսական և զիտ-տէմինիկական չափումների, այլև դեղատներում դեղեր պատրաստելու համար բոլոր պեսաթյուններում, նաև նուսաստանում, վաղուց ի վեր ոգտվում են բացառապես մետրական չափերով:

համար ունի ավելի մեծ արժեք: Յերկարության, ծանրության և ծավալի նոր չափերի ամեն մի խոշոր միավոր պարունակում է ուղիղ տառ, հարցուր կամ հազար մանր միավորները, դրա շնորհիվ չափազանց հեշտանում են մետրական չափերով ամեն տեսակ հաշիվներ անելը: Դուք կգնահատեք իսկույն չափերի այսպիսի մասնատման մեծ հարմարությունը յիթե մետ բերեք, թե վորքան հեշտ ե գումարել ուուրիներ և կոպեկները արշինների ու վերշոկների կամ ֆունտերի ու լոտերի համեմատությամբ: Որինակի համար, գումարեցեք թեկուզ այսպիսի յերեք սյունյակներ:

31 ֆ. 25 լոտ	2 արշ. 9 վերշ.	11 ոուր. 26 կոպ.
27 » 15 »	8 » 5 »	6 » 71 »
2 » 27 »	1 » 12 »	82 » 45 »

Կումարեք այդ սյունյակները մատիսով թղթի վրա, թե գրամենյակային համրիչների միջոցով, միենույն և, կհամոզվեք, վոր ամենից ավելի հեշտ գումարվում են յերրորդ սյունյակի թղթը—ուուրիներն ու կոպեկները: Յեկ զարմանալի չե, այն ժամանակ, յերք ֆունտը լոտից մեծ ե 32, իսկ արշինը վերշոկից 16 անգամ, ուուրին կոպեկից մեծ ե 100 անգամ, այսինքն այնքան, վորքան անգամ ամեն մի թղթի հարյուրավորների կարգը մեծ ե պարզ միավորից: ԶԵ վոր մեր՝ հաշվերու սիստեմը տասնորդական և, այդտեղ բարձր կարգի ամեն մի միավոր 10, 100, 1000 և այլն անգամ մեծ ե ստորին կարգի միավորից: Հասկանալի ե, վոր հաշիվը պարզ դարձնելու տեսակետից ամենահարմարն է չափերի այն սիստեմը, վորն ունի տասնորդական ստորաբաժնում: Դա յել ընդունված ե մետրական չափերում: Յեկ հենց միայն դրա համար արժեք հրաժարվել ուուսական չափերի բարդ ու անհարմար սիստեմից և անցնել մետրական պարզ ու կուռ սիստեմին:

2. ԱՅՍ ԳՐՔՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Մետրական չափերով հաջողապես ոգտվելու համար անհրաժեշտ ե նախ և առաջ հստակ պատկերացնել այդ չափերի մեծությունը, այսինքն պետք ե միշտ իմանալ ամեն մի նոր ու համապատասխան հին չափի հարաբերությունը: Յեկ հենց այս գրքույկի նպատակն է սովորեցնել ընթերցողին հեշտությամբ վերածելու նոր չափերը հներին և ընդհակառակը: Այստեղ մատնանշվում է չափերի վերածումը բանագոր, առանց թղթի ու մատիտի կատարելու ամենապարզ յեղանակները, առանց նայելու աղյուսակներ, տեղեկատու գրքեր, վորոնք առորյա կյանքում միշտ չեն լինում ձեռքի տակ: Ով ծանոթ ե թվարանական գործողություններին և հաստատ գիտե ուուսական սիստեմի չափերը, նա

առանց նեղության կարճ ժամանակամիջոցում լիովին կյուրացնի մետրական չափերը և կվարժվի: Մտավոր պարզ հաշվով վերածելու դրանք ուուսականին և լնդհակառակը:

Մանոթացնենք այժմ մետրական սիստեմի չափերի առըբեր միավորներին:

3. ԱՐՇԻՆԻ ՓՈԽԱՐԵՆ ՄԵՏՐ

Նոր չափերում արշինի փոխարեն գործածվում է մետրը: Դա ամբողջ սիստեմի հիմնական միավորն ե: Մետրն արշինից ավելի յերկար է մոտավորապես $1\frac{1}{2}$ անգամ, այսինքն համարյա թե 6 քառորդ ե կամ կեռ սաժեն: հետեւապես 50 արշին յերկարության սահմանաթումը 34 մետր ե, մեկուկես սաժեն յերկարության գերանը՝ 3 մետր և այլն:

Սակայն մետրի և արշինի մեջ մատնանշած այս հարաբերությունը չափազանց մոտավոր ե: մետրը $1\frac{1}{2}$ արշինից կամ կես սաժենից կարեն $1\frac{1}{2}$ վերշոկով: Ուրեմն, մետրը հավասար է $1\frac{1}{2}$ արշինի առանց $1\frac{1}{2}$ վերշոկի: Մետրական և ուուսական սիստեմի հիմնական միավորների միջն յեղած այս պարզ առընչությունը հարկավոր է մըտքում պինդ պահել:

Մետրը հավասար է $1\frac{1}{2}$ արշինի առանց $1\frac{1}{2}$ վերշոկի

Կամ թե՝ մետրը կիսասաժեն ե՝ կարենացած $1\frac{1}{2}$ վերշոկաչափ: Բայց, ինչպես գիտենք, վերշոկը արշինի մի 16-րդ մասն ե: հասկանալի յե, վոր $1\frac{1}{2}$ արշինի կամ կես սաժենի այդ նույն մասը կին մի $1\frac{1}{2}$ վերշոկը: Հետեւապես, կարող ենք ասել՝ մետրը կիսասաժեն ե, կարենացած իր 16-րգական մասով: Յերկու մետրը—յերկու կիսասաժեն—յուրաքանչյուրը կարճացրած իր 16-րգական մասով այսինքն՝ մի ամբողջական սաժեն, կարճացրած դրա 16-րգական մասով, կամ 3 վերշոկով: Ուրեմն, սաժենն առանց 3 վերշոկի հավասար է 2 մետրի:

Ամենեին կարիք չկա այդ բոլոր թվերը մտքում պահելու: Կարիք յեղած դեպքում մենք ամեն անգամ առանց դժվարության կմտարերենք դրանք, յիթե միայն լավ հիշենք հիմնական առընչությունը, վոր մետրը հավասար է $1\frac{1}{2}$ արշինի առանց $1\frac{1}{2}$ վերշոկի: Դա կոզնի մեզ և այլ դեպքերում: Ասենք, որինակ, հարկավոր է իմանալ, թե մետրը քանի՞ վերշոկ ե: Մենք հեշտությամբ կարող ենք հաշվել այդ, դատելով, վոր $1\frac{1}{2}$ արշինը 24 վերշոկ ե, իսկ մետրը՝ $1\frac{1}{2}$ վերշոկով պակաս, ուրեմն, մետրը $22\frac{1}{2}$ վերշոկ ե:

Մի քանի որինակներով գարձյալ ցույց տանք, թե ինչպես առանց գրչի ու մատիտի, այլ միայն բանավոր հաշվով կարելի յե յեր-

կարության նոր չափերից անցնել հներին և ընդհակառակը: Մի սահմանաթմբի յերկարությունն է 130 մետր, իմանալ՝ քանի սաժեն և զա: Մոտավորապես 65. իսկ ավելի ճիշտը 61 սաժ. հետեւյալ հաշվով—քանի վոր յուրաքանչյուր զույգ մետրը կարծ և սաժենից վերջինիս մի 16-րդ մասով, ուստի սահմանաթմբի յերկարությունը վոչ թե 65 սաժեն է, այլ պակաս դրա 16-րդական մասով: 65-ի մի 16-րդ մասը մոտավորապես 4 է, ուրեմն, 130 մետրը կմնի մոտ 61 սաժեն:


Քանի մետր է 10 արշինանոց գերանը: 9 արշինը կամ 3 սաժենը 6 մետր է և ելի 3×3 վերշոկ (չե՞ վոր մի սաժենը 2 մետրից յերկար է 3 վերշոկով), մուսմ է, ուրեմն, 9 վերշոկ և կրկին մի լրիվ արշին, այսինքն ընդամենը 25 վերշոկ կամ մի մետրից քիչ ավելի: Հետևապես, այդ վերանի յերկարությունն է $6 + 1 = 7$ մետր:

Չափված է 33 մետր չիթ, քանի արշին և զա: 32 մետրը կամ 16 զույգ մետրը կլինի 16 սաժ. առանց 16-րդ մասերի, այսինքն 15 սաժ. կամ 45 արշին: Մի մետրն ել հավասար է $1\frac{1}{2}$ արշինի առանց $1\frac{1}{2}$ վերշոկի, ուրեմն, ընդամենը կլինի $46\frac{1}{2}$ արշինից քիչ պակաս, իսկ ավելի ճիշտը՝ 46 արշ. $6\frac{1}{2}$ վերշոկ:

Այս բոլորն, ինչպես տեսանում եք, մտքում կատարելու շատ պարզ հաշիվներ են: Հաղիկ թե դժվարանաք այժմ— առանց զրչի ու թղթի ողնության — վորոշ թվով սաժեններ ու արշիններ բանավոր վերածելու մետրերի և ընդհակառակը: Գետք և միայն մի բան հիշել, «Մետրը $1\frac{1}{2}$ արշին և առանց $1\frac{1}{2}$ վերշոկի», իսկ սրանից հետեւմ է, վոր մետրը հավասար է կես սաժենի՝ վերջինս կարճացրած մի 16-րդ մասով:*)

4. ՅԵՐՉԱՆԻԿ ԶՈՒԳԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ


Յեթե ինչ ինչ պատճառներով դա յել սահի, անհետանա հիշողությունից, անա ներկայացնենք մի պարզ միջոց արշին ունենալիս մետր ստանալու և մետր ունենալիս արշին:



Գծ. 1. ցոյց և տալիս, վոր յեթե քառակուսու կողմերը հավասար են մի-մի մետրի, ապա այդպիսի քառակուսու անկյունագծերը փոխադարձարար քաֆանում են իրար յերկու-յերկու արշինի: Յեկ վորովհետև այդ շեղ գծերը (անկյունագծերը) միմյանց հանդիպելով կազմում են ուղիղ անկյուններ, ուստի այսանդից հետեւմ և նաև մի ուրիշ, խիստ ոգտակար ցուցմունք—յեթե ուղիղ անկյան կողմերով (որ, սեղանի կողերով), ակած զագաթից, տանենք մի-մի արշին, այն ժամանակ դրանց ծայրերը միացնող գիծը կլինի ուղիղ մի մետր:

*) Այս առջնությունը, վորը ճշգրիտի համեմատությամբ հազիվ 0,00013 անձառություն ունի, զործագրելի յե վոչ միայն առողյա կյանքում, այլ նաև ավելի ճիշտ հաշվումների ժամանակ: Մյուս առջնությունը (մետրը = 40 մատնաշափի) ավելի անճիշտ, սակայն զործագանում նույնպես խիստ հարմար է:

Արշինի և մետրի միջի յիղած այս պարզ առընչությունը միանգամայն պատահական է*): Դա մի դուզադիպություն է, մեզ համար իրոք յիրջանիկ, վորովհետև անսպասելի կերպով հեշտացնում է մեր



Գծ. 2.

զործը հին արշինից անցնելու նոր մետրին: Հետագայում կտեսնենք, թե այս պարզ գծանկարը ինչպիսի լավ ծառայություն կարող է անել նաև ուրիշ հաշվումների ժամանակ:

5. ՎԵՐՇՈԿԻ ՅԵՎ ՄԱՏՆԱԶԱՎԻ (ՃՅՈЙՄ) ՓՈԽԱՐԵՆ

Արշինը բաժանվում է միայն 16 մասերի—վերշոկների, իսկ մետրը ստորաբաժանվում է շատ ավելի մասն մասերի, թվով 100, վորոնք կոչվում են սանիտիմետրեր: Շատ հեշտ է միտ բերել, վոր մի մետրը 100 սանտիմետր է:

Վերշոկը քանի սանտիմետր է: Դժվար չե հաշվել դա, յիթև յել-

*) Ով վասն յերկրաչափություն և ծանօթ ե այսպես կոչված «Թյութագորի թերթիմին», նա կը բունի մեր 1. զծանկարի ծագումը, յիթե զատի, վոր մետրի յերկարության հարաբերությունը արշինի նկատմամբ մոտավորապես հավասար է 1,41, այսինքն՝ 2-ի քառ. արմատին և վոր քառակուսու անկյունագիծը հավասար է նրա կողմին՝ բազմապատկած 2-ի քառ. արմատով: Եյտեղ սխալնքը մի 100-րդ մասից չի անցնում (2-ի քառ. արմատը հավասար է 1,414, իսկ մետրի հարաբերությունն արշինին = 1,406, առըստությունն ընդամենը կես տակու է):

նենք մեզ արդեն ծանօթ առընչությունից—«մետրը հավասար է $1\frac{1}{2}$ արշինի առանց $1\frac{1}{2}$ վերշոկի»: Յերկու մետրը 200 սանտիմետր է, միաժամանակ 2 մետրը հավասար է սաժենի առանց 3 վերշոկի, այսինքն 45 վերշոկի. Ուրիշն, 45 վերշոկը նույնն է, ինչ 200 սանտիմետրը, իսկ մի վերշոկը՝ 200; $45 \times 200 = 4\frac{1}{2} \times 200 = 45$ սանտիմետրի (վորովհետև $45 \times 4 = 180$ -ի, իսկ մետրով 20-ը համարյա 45-ի կեմն է):

Այսպիս ուրիշն, վերշոկը $4\frac{1}{2}$ սանտիմետր է, 2 վերշոկը՝ 9 սանտիմետր, վոր դա իմացանք առանց դիմելու զանազան աղյուսակների, տեղեկատուների, այլ ինքներու հաշվեցինք մոքում. այդ հաշվումներն, ի հարկե, միշտ կարող կլինենք կրկնելու:

Նման մատվոր պարզ հաշվիներով մենք կդտնենք հին ու նոր յերկարության չափերի միջ անհրաժեշտ ուրիշ առընչություններ և այլ գրանք:

Սահմանը բանի՝ սանիտիմետր է:

Գետենք, վոր 2 վերշոկը հավասար 9 սանտիմետրի, ուրիշն, 16 վերշոկը (այսինքն 1 արշինը) կլինի $8 \times 9 = 72$ սանտիմետր թվով 70:

Սաժենը բանի՝ սանիտիմետր է:

Յերեք անգամ ավելի, քան արշինը, այսինքն $70 \times 3 = 210$:

Միանգամից գտնենք, թե վոնեաչափը կամ սաժենի 7-րդ մասը բանի՝ սանիտիմետր է: 210 բաժանելով 7-ի՝ կստանանք 30: Ուրիշն, վոտնաչափը 30 սանտիմետր է:

Մատնաչափը բանի՝ սանիտիմետր է:

Ի հարկե, 12 անգամ պակաս վոտնաչափից: Բաժանելով 30-ը 12-ի, կստանանք $2\frac{1}{2}$: Հետևապես մատնաչափը $2\frac{1}{2}$ սանտիմետր է:

Յեկ այսպիս, բերանացի, առանց տեղեկատու աղյուսակների ոժանդակության, ուսւական չափերի ու սանտիմետրների միջի գտանք այսպիսի առընչություն—

Վերշոկ $4\frac{1}{2}$ սանտիմետր

Մատնաչափ $2\frac{1}{2}$ »

Արշին 70 »

Վոնեաչափ 30 »

Տեսնում եք, վոր այս փոքրիկ աղյուսակը առաջացավ «մետրը հավասար է $1\frac{1}{2}$ արշինի առանց $1\frac{1}{2}$ վերշոկի» հիմնական առընչությունից:

Այդ աղյուսակից, ի միջի այլոց, հետևում է, վոր արշինը մոտավորապես հավասար է մետրի $\frac{7}{10}$ -ին ($70 : 100$) և վոր 7 արշինը հավասար է 5 մետրի ($7 \times 70 = 490$, այսինքն համարյա 500 սանտ. կամ 5 մետր), իսկ վոտնաչափը $3\frac{1}{2}$ անգամ պակաս մետրից: Այդ, ինչպես նաև նախկին բոլոր պիտանի թվերը ամեն անգամ, յիթե մոռացվեն, հեշտ է հանել հիմնական առընչությունից:

Դժվար չեն նույնապես գծագրել մետրի մի քանի մասերը, յեթե ողողվենք վերևում բերված «մետրո-արշին» գծանկարի հատկություններից:

Ասենք թե պկաք և գծագրել $\frac{1}{4}$ մետր, ուղիղ անկյան կողմերի ուղղությամբ զատեցեք 4×4 վերշոկ, այսինքն մի-մի քառորդ արշին և զրանց ծայրերը միացըք. միացնող գիծը հավասար կլինի $\frac{1}{4}$ մետրի: Յեթե պահանջվի գծագրել մետրի 7×7 մասը ուղիղ լանկյան կողմերով, զատեցեք 4×4 մատնաշափի և: Մետրի մի 8×8 մասը ստանալու համար պկաք և ուղիղ անկյան կողմերով զատել յերկու-յերկու վերշոկ և այլն: Այս բոլորը հիմնված են այն բանի վրա, վոր մետրի և արշինի հավասար մասերի միջև պկաք և լինի նույն հարաբերությունը, ինչ վոր կա ամբողջ մետրի և արշինի միջև: Յեկ ընդհակառակը, ուղիղ անկյան կողմերի ուղղությամբ զատելով, որինակ, $10-10$ սանտիմետր, այսինքն, մետրի մի 10×10 մասը, միացնող գիծը կլինի արշինի $\frac{2}{10}$ կամ $\frac{1}{5}$ մասը:

Դարձյալ մի դիտողություն: Մետրական սիստեմում, բացի սանտիմետրը, գործարվում են մետրի և այլ ստորաբաժնումները: Դա հետեւան և, կա մի չափ, վերը տասնապատճել մած և, և մի ուրիշ չափ, վերը տասնապատճել փոքր և տասնախմետրից: Առաջինը, այսինքն 10 սանտիմետրը կամ մետրի մի 10×10 -րդ մասը կոչվում է գեցիմեռ: Առանց գծագրության կարող եք հաշվել, վոր գեցիմեռն ուղիղ 4 մատնաշափի և, նույնապես և այն, վոր 2 վերշոկից քիչ ավելի յեւ: Ի-շեցեք 2 վերշոկը հավասար է 9 սանտիմետրի:


Սանտիմետրի մի տասերորդ մասը կոչվում է միլիմետր. այս շատ փոքրիկ չափը, վոր մետրի մի 1000×10 մասն և, գործածվում է խիստ մասն առարկաներ չափելու համար, որինակ, յերկաթալարի հաստությունը: Մատնաշափը 25 միլիմետր է (փորովիտեւ $2^{\frac{1}{2}}$ սանտիմետրը հավասար է 25 միլիմետրի):

Հետ և ըմբռնել այսքան բազմաթիվ և միորինակ (բոլորն իւ 10 անգամ) ստորաբաժնումների մեծ հարմարությունը: Մանր բաների չափումների ժամանակ համարյա կարիք չի լինում դիմելու կոտորակների, մինչդեռ վերշոկներով չափելիս ամեն քայլափոխի դիմում ենք վերշոկի $\frac{1}{2}$ -ին, սրա $\frac{1}{4}$ -ին, $\frac{1}{8}$ -ին և այլն:

6. ՄԵՏՐԸ ՅԵՎ ԴԵՑԻՄԵՏՐԸ ՄԻՇ ՄԵԶ ՄՈՏ ԵՆ

Կարող են պատահել, վոր ձեռքի տակ չունենալով վոչ մետր և վոչ ել արշին, կարիք լինի մետրական չափերը թեկուղ մոտավորապես չափելու: Խոչպես յելնել այս գծագրությունից, այսպես, ինչպես արշինը չեղած ժամանակ չափում են «քառորդներով» բութը և ցուցամատը լայն բացած այսպես:

Արշինի համար վերցնում են 4 «քառորդ» իսկ մետրին՝ մեկ ու կես անգամ ավելի, այսինքն՝ 6 «քառորդ»:



Ֆ. 4.

Մյուս, նույնապես մոտավորապես հավասար է թեկ յերկարությանը, իսկ մետրն ավելի յեւ սրանից չափահաս մարդու կրծքի լայնությամբ, ավելի յեւ սրանից չափահաս մարդու կրծքի լայնությամբ:

Արժեք միտ բերել նույնապես, վոր գեցիմետրը համարյա հավասար է հասակավորի ձեռքի (5 մատների) լայնությանը, նայեվ ցուցամատի յերկարությանը, հասվելով բրամատի հիմքից:

Լավ կիներ, վոր ամեն վոք իր վրա փորձեր այս առնչությունները և մտքում պահեր, թե իրոք արանք վորքան են զանազանվում ձիշտ առընչություններից: Այդ դեպքում մետրը և դեցիմետրը միշտ կլինեն մեզ մոտ, ի հարկե միայն մոտավոր, բայց վոչ ձիշտ չափումների համար:

Ի վերջո, քանի վոր հասակավորի քայլը մոտավորապես մի արշին և, ուրեմն ամեն 3 քայլը հավասար կլինի 2 մետրի:

7. Լ Ո Ւ Ց Կ Ւ


Առորյա կյանքում ոգտակար կլինի իմանալ նաև, վոր սովորական լուցկին ունի 5 սանտիմետր կամ կես դեցիմետր յերկարություն: Ձեռքի տակ արշին կամ մետր չունենալիս հետ և վերականգնել դրանց յերկարությունը առորյա գործածության համար բավական ճշգրիտ—մի յերկարությունը



5. Գ. Ճ.

գծով շարված 10 լուցկիները կազմում են կես մետր: Իսկ թէ ինչպես պետք է յերկու կես մետրանոց ձողերից ստանալ արշինի յերկարությունը, արդեն զիտենք § 4-ից:

Վերևի ասածից հետևում է, ի միջի այլոց, վոր ուղիղ անկյուն կազմած յերկու լուցկիների ծայրերի հետափորությունը պետք է լինի արշինի մի 10-րդ մասը: Դա ցուցադրված է հետեւյալ գծանկարում:



Հայոց յանդեսում
10 արշին
9. 6.

մար ձեռվագ սրանց մասերի մոտավոր յերկարությունը:

8. ՎԵՐՍԻ ՓՈԽԱԲԵՆ ԿԻԼՈՄԵՏՐ

Մեծ տարածությունները չափում ենք վերստերով, վորոնց մետրական սիստեմում փոխարինում է կիլոմետրը, բաղկացած 1000 մետրից: Միտ բերելով, վոր մետրը համարյա կիսասաժեն է, իսկ վերստը՝ 500 սաժեն կամ 1000 կիսասաժեն, հեշտ և զլի ընկնել վոր կիլոմետրը, այսինքն 1000 մետրը պետք է քիչ կարճ լինի վերստից: Հետ վոր կիլոմետրը 1000 կարճացրած կիսասաժեն է: Բայց վարքան կարճացրած—յուրաքանչյուրը 16-ական մասով: Կընշանակի 1000 մետրը հավասար է 500 սաժենի՝ կարճացրած 16-րդ մասով, այլ խոսքով—կիլոմետրը հավասար է վերստի, առանց սրա 16-րդ մասին: Ահա և զտանք վերստի ու կիլոմետրի առընչությունը—կիլոմետրը = $\frac{1}{16}$ վերստի:

Կիլոմետրը քանի՞ սաժեն է: Անշուշտ, վոչ 500, այլ պակաս 16-րդ մասով: Բաժանենք 500-ը 4-ի և ստացված թիվը՝ 125-ը կրկին բաժանենք 4-ի, կստանանք 31. դա 500-ի մի 16-րդ մասն է (չհաշված կոտորակը): Հետևապես, կիլոմետրը կլոր հաշվով 30 սաժենով պակաս է վերստից, ուրեմն, հավասար է 470 սաժենի:

Վերցնենք հակառակը—քանի՞ մետր է վերստը, դա յել գժվար չէ մաքում հաշվել: Գիտենք, վոր 1000 մետրը լրիվ վերստ չի կազ-

մում, պակասում է 30 սաժեն կամ մոտ 60 մետր: Կընշանակի, վերստը 1060 մետր է, այսինքն մի ամբողջ կիլոմետր և զարձյալ 60 մետր:



Այսպիս, ուրեմն, իմացանք այժմ հետեւյալ առընչությունները, վորոնք միշտ կարող ենք վերհիշել:

Կիլոմետրը = վերստի, կարճացրած վերջինը մի 16-րդ մասով, կամ
» = 470 սաժենի

Վերստը = 1 կիլոմետրի և 60 մետրի:

9. ՔԱՐԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ

Փոքր մակերեսներ, որինակ, հատակի մակերեսույթը և այլն, չափելու համար գործածում ենք քառ. արժեներ կամ քառ. սաժեներ: Մետրական սիստեմում այսպիսի գեղքերում գործադրում են, ի հարկե նույնական քառակուսի չափ—քառ. մետրը: Ի՞նչպես են հարաբերում միմյանց հին ու նոր քառ. չափերը՝ քառ. արշինը և քառ. մետրը: Դրանց միջև կա զարմանալի պարզ առընչություն, վորը հեշտ և նկատել § 4-ում բերված «մետրո-արշին» քառակուսու ֆիգուրում: Յեկ իսկապես, տեսնում եք, վոր քառ. մետրը բաժանված է 4 յուանկյունների, յերևակայեցեք, վոր գրանք զույգ-զույգ կցված են իրար յերկար կողմերով, ինչպես ցույց է տրված այստեղ 7-րդ գծանկարում, և դուք կստանաք 2 քառ. արշին*): Ուրեմն, քառ. մետրում զիտեղվում են ճիշտ 2 քառ. արշին, հետևապես մի քառ. արշինը քառ. մետրի կեսն է:



Գծ. 7. ցույց է տալիս, վոր քառ. մետրը հավասար է 2 քառ. արշինի:
Այս գծանկարի ձախ կեսը գծ. 1-ի կրկնությունն է:

*): Դա—«Պյութագորյան թեօրեմի» առաջին հետևությունն է.—Եթե մետրը կազմում է ներքնաձիգը մի յեռանկյան, վորի եղերը հավասար են մի-մի արշինի, ապա այն քառա-

քառ. մետրը = 2 քառ. արշինի

քառ. արշինը = $\frac{1}{2}$ քառ. մետրի:

Ուստի չափազանց հեշտ և քառ. արշինը դարձնել քառ. մետր և
ընդհակառակը. այստեղ պետք է թիվը կամ կրկնապատկել և կամ կիսել
իմանալով, վոր 2 քառ. արշինը հավասար է 9 քառ. մետրի, մենք
առանց նեղության կարող ենք գտնել, թե քառ. մետրը քանի՞ քառ.
վոտնաչափ ե: Իրոք, քառ. սաժենը $7 \times 7 = 49$ քառ. վոտնաչափ ե.
յերկու քառ. սաժենը՝ 98 քառ. վոտնաչափ, միևնույն ժամանակ 9 քառ.
մետր: Կնշանակի, 98 քառ. վոտնաչափը հավասար է 9 քառ. մետրի,
վորից հետևում է մի քառ. մետրը՝ $98:9 = համարյա 11$ քառ. վոտնա-
չափի ($99:9 = 11$),

Այսպիսով.


քառ. մետրը = 2 քառ. արշինի = 11 քառ. վոտնաչ.

» արշինը = $\frac{1}{2}$ » մետրի

» սաժենը = $4\frac{1}{2}$ » մետրի:

Կուսին, վոր կառուցված և ներբնաձիգի վրա, պետք ե հավասար լինի այն քառակուսիների
դումարին, վորոնք կառուցված են եջերի վրա, այլ խորքով՝ բառ. մետրը = 2 քառ. արշինի:

1079
1003



Խարեն գործադրվում է հեկտար: Թե ինչ ե դեսյատինը, բոլորը գրառ

10. ՔԱՌԱԿՈՒՄԻ ՍԱՆՏԻՄԵՏՐ

Այսուղ մեզ կարող են հետաքրքրել 4 առընչություններ:

Քառ. արօինը բանի^o բառ. սանտիմետր ե:

Շատ հեշտ է գտնել դո, յեթե յելնենք մեր հենց նոր յերեան բերած առընչությունից— քառ. արշինը = $\frac{1}{2}$ քառ. մետրի: Քառ. մետրը հավասար է $100 \times 100 = 10,000$ քառ. սանտիմետրի, հետևապես քառ. արշինը 5000 քառ. սանտիմետր է (կամ 50 քառ. դեցիմետր, վորովհատի քառ. դեցիմետրը $10 \times 10 = 100$ քառ. սանտիմետր է):

Քառ. վասնաչափը բանի^o բառ. սանտիմետր ե:

Այսուղ կարող ենք յելնել քառ. սաժենից, սա հավասար է 9 քառ. արշինի, այսինքն $4\frac{1}{2}$ քառ. մետրի, ուրեմն և 45,000 քառ. սանտիմետրի: Քառ. սաժենը $7 \times 7 = 49$, կոր թվով 50 վատնաչափ եւ Բաժանելով 45,000-ը 50-ի, կիմանանք, կոր քառ. վատնաչափը մոտավորապես 900 քառ. սանտիմետր է, կամ թե մոտ. 9 քառ. դեցիմետր:

Քառ. վերոնկը բանի^o բառ. սանտիմետր ե:

Ցույց տվինք արգեն^y (§ 5) ինչպես հաշվել, վոր 2 գծային վերշոկների վրա զետեղվում է 9 սանտիմետր: Յերկու վերշոկ յերկարության կողմեր ունեցող քառակուսում՝ պարունակվում են $2 \times 2 = 4$ քառ. վերշոկ և միաժամանակ՝ $9 \times 9 = 81$ քառ. սանտիմետր: Հետևապես, յեթե 4 քառ. վերշոկը հավասար է 81 քառ. սանտիմետրի, ապա ուրեմն, 1 քառ. վերշոկը = $81:4$, այսինքն 20 քառ. սանտ.

Վերջապես, բառ. մատնաչափը բանի^o բառ. սանտիմետր ե: Հաշվում ենք նման ձևով. 2 գծային մատնաչափերի վրա զետեղվում են 5 գծային սանտիմետր: Յերկու մատնաչափ յերկարության կողմեր ունեցող քառակուսին բանելով 4 քառ. մատնաչափ մակերես, միաժամանակ՝ պարունակում է $5 \cdot 5 = 25$ քառ. սանտիմետր: Ուրեմն, քառ. մատնաչափը կլինի $25:4 = 6$ քառ. սանտիմետր, քիչ ավելի:

Ահա հին չափերի հետ համեմատելով ինչ մատավոր առընչություններ կարող ենք միշտ գտնել քառ. սանտիմետրի համար, յեթե կարիք լինի վերածումը կատարել մաքում, առանց աղյուսակների:

1 քառ. արշինը = 5000 ք. սանտ. կամ 50 ք. դեցիմետրի.

1 » վոր. = 900 ք. » » 9 » »

1 » վերշոկը = 20 ք. » » մի քառ. դեց. 5-րդ մասին

1 » մատ. = մոտ 6 ք. սանտ:

11. ԴԵՍԱՍԻՆԻ ՓՈԽԱՐԵՆ ՀԵԿՏԱՐ

Դաշտեր չափելու համար մետրական չափերում գեսայտինի փոխարեն գործադրվում է հեկտարը: Թէ ինչ է դեսայտինը, բոլորը գիտեն

մի հողաբաժին 2400 քառ. սաժեն մակերեսով: Հեկտարն էլ մի հողաբաժին և ճիշտ 10,000 քառ. մետր մակերեսով:

Վերն և զրանցից ավելի մեծ, հեկտարը թէ գեսյատինը: Դժվար չե հաշվել այդ, յեթե նկատի առնենք, վոր քառ. մետրը 2 քառ. արշին և, ուրեմն, հեկտարը կամ 10,000 քառ. մետրը նույնն է թէ 20,000 քառ. արշին, իսկ զրանցից 9 անգամ պակաս՝ կստանանք մոտ. 2200 քառ. սաժեն: Այսպիսով, իմացանք, վոր հեկտարը 200 քառ. սաժենով պակաս և զեսյատինից *):

Այս մինուոյն բանը կարող ենք հաշվել նաև ուրիշ յեղանակով, 2400 քառ. սաժենը վերածելով քառ. մետրերի: Քառ. սաժենը կամ 9 քառ. արշինը հավասար և $4\frac{1}{2}$ քառ. մետրի: Բազմապատկելով 2400-ը $4\frac{1}{2}$ -ով, կստանանք 10,800 ք. մետր, հեկտարից **): 800 ք. մետրով ավելի:

Այս կամ այն ձեռվ միշտ կարող ենք մտքում հաշվել, վոր նոր չափ՝ հեկտարը մոտավորապես իր մի 12-րդ մասով ավելի փոքր և զեսյատինից. կընշանակի 11 գեսյատինը=12 հեկտարի: Ուստի շատ հեշտ և ուղած քանակի զեսյատինները փոխադրել հեկտարի—պետք և զեսյատինների թվին ուղղակի ավելացնել այդ թվի 11-րդ մասը:

Հեկտարը զեսյատինի վերածելու, ընդհակառակը, պետք և հեկտարների թվից հանել զրա 12-րդ մասը: Որինակ 28 զեսյատինը մոտ $30\frac{1}{2}$ հեկտար և, 115 հեկտարը մոտ 104 զեսյատին: Թէ յերբ և հարկավոր ավելացնել և յերբ նվազեցնել չենք շփոթի, յեթե միայն հիշենք, վոր զեսյատինն ավելի մեծ և հեկտարից և, ուրեմն, մի հողամասի զեսյատինների թիվը պետք և ավելի պակաս լինի հեկտարների թվից:

Ահա այն բոլորը, ինչ պետք և իմանանք հողային նոր չափի՝ հեկտարի մասին—11 զեսյատինը հավասար և 12 հեկտարի, կատենք միայն, վոր փոքր հողամասեր, որինակ, քաղաքի սահմաններում շենքեր, պարտակներ և այլն չափելու համար գործադրում և ավելի փոքր չափ—ար, 100 անգամ փոքր հեկտարից: Այլ մի քառակուսի յի, ամեն մի կողմը 10 մետր, ուրեմն, $10 \cdot 10 = 100$ քառ. մետր մակերեսով: Այսուհետ ևս ճիշելով մեր «մետրո-արշին» ֆիզուրը, անմիջապես կըստ-

*): Ի գեղ, ցույց տանք 9-ի վրա բերանացի բաժանելու չափազանց հարաբ մի յեղանակ, զա ճիմնափառ և (փփանակ բաժանմոն գործողության) $\frac{1}{9}$ -ով կամ $0,111\text{-ով}$ բազմապատկելու վրա: Հնակառիք, փորպեսզի մի թիվ մոտավորապես բաժանելով 9-ի, բավական և գոտնել այդ թիվ $\frac{1}{10}$ -ը և քանորդին ավելացնել սրա 10-րդ մասը: Որինակ, 200-ը 9-ի բաժանելու համար, 200-ը բաժանում են 10-ի և քանորդին՝ 20-ին, ավելացնում $\frac{10}{10}$ -ը, այսինքն 2: Ստանում են մոտավոր արդյունքը—22: Ավելի ճիշտ արդյունք ստանալու համար 22-ին ավելացնում են ևս $\frac{2}{10}$, այսինքն 0,2 և այլն:

**): Առաջին յօրանակով ստացանք 200 ք. սաժ. կամ 900 ք. մետր տարբերություն: Թվերը լիսին չեն համապատասխանում այն պատճառով, վարովինելու բաժանել ենք կլորացնելով:

Նենք, վոր արք հավասար և 200 քառ. արշինի կամ մոտավորապես 22 ք. սաժենի (200:9= 22-ի և կոտորակի):

Այսպիսով—

$Արը=100$ ք. մետրի=200 քառ. արշ.=22 քառ. սաժենի

Հեկտարը=10,000 ք. մետրի=1 գեսյատինի, առանց դրա 20-րդ մասի=2,200 ք. սաժենի:

11 գեսյատինը=12 հեկտարի:

12. ԽՈՐԱԿԱՐԴ ՄԵՏՐ

Այն դեպքում, յերբ, որինակ, դարսած վառելափայտը, ավագակույտերը, շահմարանի ծավալը և այն չափելու համար մինչև այժմ զործազրկում եյնին խոր, սաժեն և խոր, արշին, նոր չափերից իհարկե պետք և զործազրկու խորանարդ մետր:

Համեմատենք նախ խոր, մետրը խոր, արշինի հետ: Յերեակայինը խորանարդածե արկղ մի մետր կողմերով և չափենք դրա ծավալը խոր, արշիններով: Այդպիսի արկղի հիմքը (1 քառ. մետր) հավասար և 2 քառ. արշինի: Արկղի բարձրությունը լինելով մի մետր, քիչ պակաս և $1\frac{1}{2}$ արշինից: Դրա ծավալը գոտնելու համար պետք և հիմքը բազմապատկել բարձրությամբ՝ $2 \cdot 1\frac{1}{2}=3$: Հետևապես, խոր, մետրը պարունակում և 3 խոր. արշին (քիչ պակաս), զորովհետև գիտենք արդեն, վոր մետրը $1\frac{1}{2} \cdot 2,2=3$ արշինից կարճ է: Հեշտ և հասկանալ, վոր խոր, մետրը 3 խոր. արշինից փոքր և այնքան, վորքան մետրը $1\frac{1}{2} \cdot 2,2=3$ արշինից, այսինքն մի 16-րդ մասով: Յա յի խոր, մետրի և խոր. արշինի մոտավոր առընչությունը:

Բազմապատկելով այդ թիվը 10 անգամ, կստանաք 27 և կոտորակ, այլ խոսքով, կիմանաք, վոր 10 խոր, մետրում գտնեղվում են մոտ. 27 խոր. արշին, դա յել հենց մի խոր. սաժենն է: Դարձյալ թիվը շատ հարմար գուգազիպություն և—խոր. սաժենը պարունակում է մոտ. 10 խոր. մետր, այնպես վոր խոր. մետրերը խոր. սաժենների և ընդհակառակը վերածելը շատ հեշտ է ²⁾:

1) Անզուտ չե նկատի ունենալ նաև հետեւյալ: Վառելափայտի կիսաշինային սաժենը խոր. սաժենի վեցերորդ մասն և, հետեւապես, դրա ծավալը հավասար է $10 : 6 = 1,66$ լի. մետրի: Քանի վոր գասավորելիս դատարկ տարածությունը բռնում և ամրող ծավալի մոտ. $40\%-\text{ը}$, ուստի այդպիսի սաժենում միայն փայտային մասը կլոր հաշվով կը լինի 1 խորանարդ մետր: Այս հանգամանքը ստում և հեշտ հնարափորություններ, զերանի ծավալը դեցիմետրներով իմանալու գեպրում փորոշել, թէ քանի՞ այդպիսի գերաններ պետք կլինին մի սաժենին համար:

Մնում ե ծավալի նոր չափը՝ խոր. մետրը համեմատել խոր. վունաչափի հետ ևս. Խոր. սաժենը 7.7.7 = 343 խոր. վունաչափ ե. բացի այդ գիտենք, վոր խոր. սաժենը 10 խոր. մետրի յէ հավասար, ուշըմն, 10 խորանարդ մետրը հավասար է 343 խոր. վունաչափի, խոկմի խոր. մետրը՝ մոտավորապես 34 խ. վունաչափի (կլոր թվով 35):

Այսպիսով

1 խոր. մետրը	խոր. սաժենի 10-րդ մասն և:
	պարսկական և $2\frac{3}{4}$ խ. արշին » 35 խ. վառնաչափ:

13 ԽՈՐ. ՍԱՆՏՄԵՏԸ ՅԵՎ ԴԵՑԻՄԵՏԸ


Նոր սիստեմի չափերում խոր. մատնաչափերին ու խոր. վերջող ներին փոխարինում ե խոր. սահմանմատրը և խոր. դեցիմմատրը. Հասկանալիք յե, զոր փոքրիկ սանտիմմատրն այդ հին չափերից ավելի ճարմար ե, զորովհետև վորքը ծավալներ չափելիս ավելի քիչ գեղաքերում կրտացվեն կոտորակային թվեր:

Խոր. սանտիմենտը խոր. մատնաչափի և խոր. վերշոկի հետ համեմատելու համար պետք է վարվենք այնպես, ինչպես համապատասխան քառ. չափերի հետ: Սկսենք մատնաչափից: Յերկու գծափեն մատնաչափը հավասար է 5 սանտիմետրի, ուրեմն, 2 մատնաչափ կողքից ունեցող խորանարդը պետք է պարունակի $2 \cdot 2 \cdot 2 = 8$ խոր. մատնաչափ և միտժամանակ $5 \cdot 5 \cdot 5 = 125$ խոր. սանտիմետր: Այսուղից իմանում ենք, վոր մի խոր. մատնաչափը պարունակում է $125 : 8 = 15.625$.

Նման մի հաշիվ հեշտ և անել և խոր. վերջուկի վերաբերյալ: Քանի վոր 2 զծային վերջուկը հավասար է 9 սանտիմետրի, ուստի 2 վերջուկ կողեր ունեցող խորանարդը պետք է պարունակի 2 . 2 . 2 = 8 խոր. վերջուկ, և միաժամանակ 9 . 9 . 9 = 81 . 9 = 729 խոր. սանտիմետր: Աւրիմն, մի խոր. վերջուկը հավասար է 729 : 8 = 91 կամ, արտահայտած կոր թվով, 90 խոր. սանտիմետրի:

Խոր. զեցիմետքերավ, այսինքն 10 սահմանադրությունը կողքից ուժից առ խորանարդներով հարմար և չափել վոչ չափազանց մանր և վոչ ել խիստ խոշոր ծավալները:

Վորովհանի խոր. գեցիմնեարը խոր, սանտիմեարից մեծ և 10 · 10 · 10=1000անգամ, ուստի խոր. գեցիմնեարը պարունակում է այնքան խոր. մատնաչափ, զորքան 1000-ի մեջ պարունակվում է 16-ը, այսինքն մոտ, 60; Խոր. գեցիմնեարում կա 1000; 90=11 խոր. վեցրոկի:



Խոր. գեցիմետրը դժվար չէ համեմատել նաև խոր. վոտնաշափի հետ: § 12-ից գիտենք արգեն, վոր խոր. մետրը մոտավորապես 34 խոր. վոտնաշափ է, իսկ խոր. գեցիմետրը խոր. մետրի 1000-րդ մասն է, ուրեմն, 1000 խոր. գեցիմետրը հավասար է 34 խոր. վոտնաշափի, իսկ 1 խոր. վոտնաշափը պարունակում է 30 խոր. գեցիմետր, քիչ ուղեկաս (34 : 30 = 1020):

Ահա վորքը ծավալների համար ինչ առընչություններ կարող ենք յերկան հանել հին ու նոր չափերի մեջ:

Խոր. գեցիմետրը = 60 լս. մատնաշափի = 11 լս. վերշոկի:

Խոր. մատնաշափը = 16 լս. սանտիմետրի կամ խոր. գեցիմետրի 60-րդ մասին:

Խոր. վերշոկը = 90 լս. սանտ. կամ լս. գեցիմետրի 11-րդ մասին:


Խոր. վոտնաշափը = 30 լս. գեցիմետրի:
Նախքան առաջ անցնելը մի անգամ ել նկատենք, վոր խոր. մեծ չափերում խոր. վորքը միավորների պարունակումը գտնելու համար պետք է միենույն գծալին միավորների հարաբերությունը բազմապատկել իրենց կրկնակի: Այսպես, խոր. մետրը 10 · 10 · 10 = 1000 լս. գեցիմետր է, 100 × 100 · 100 = մի միլիոն լս. սանտիմետր: Այսպիսի կրկնակի բազմապատկումից շատ գեղքերում ստացվում են նսկայական թվեր, որոնցից յերբեք չպետք է անհանգստանալ: Որինակ, խոր. մետրը 1000 · 1000 · 1000 = 1,000,000,000, այսինքն մի միլիարդ խոր. միլիոնը է, $1\frac{1}{2}$ անգամ ավելի քիչ, քան մարզկանց ընդհանուր քանակն աշխարհում: Այստեղ եւ բնական է, կառաջնան նսկայական թվեր, վորովհետեւ խոսքը վերաբերում է այն բանին, որինակ, թե քանի՞ ամենափոքրիկ կաթելներ ե պարունակում մի մեծ 80 դոյլանոց տակառը:

14. ՖՈՒՆՏԻ ՓՈԽԱՐԵՆ ԿԻԼՈԳՐԱՄ

Մենք զննեցինք յերկարության, մակերեսների ու ծավալի նոր չափերը, անցնենք այժմ ծանրության չափերին: Նոր չափերում բնչն է փոխարինում ֆնտանոցին: Նախքան այդ հարցին սպատասիսանելը մի վորքը կանգ առնենք ֆունտի ծագումը մեկնելու: Հավանական է, շատերի համար նորություն լինի, վոր ֆնտանոց քարը բավական հասարակ կերպով կապված է մեր տարածական չափերին, այն, վոր մի ֆունտ ջուրը բռնում է ճիշտ 25 լս. մատնաշափ ծավալ (և հետեւապես վութը 1000 խոր. մատնաշափ), նկատի առնելով դա՝ անցնենք ծանրության նոր միավորին:

Ծանրության մետրական միավորը, վոր կոչվում է կիլոգրամ,

հույնակես կապված և տարածական չափերին. հարաբերությունն այսինք ավելի ևս պարզ է: Կիլոգրամը հավասար է 1 խոր. զեցիմետր շրջագիծին:



գծ. 10. Կիլոգրամ

Այդ իմանալով հեշտ և հաշվել՝ ի՞նչպես են հարաբերությունը կիլոգրամը Բավական և գտնել միայն, թե 25 լ. մատնաշափը քանի՞ անգամ ե զետեղվում մի խոր. զեցիմետրում: Բայց արդեն հաշվել ենք, վոր 1 խոր. զեցիմետրը մոտ. 60 խոր. մատնաշափ և կիլոգրամը մոտավորապես 60:25=համարյա 2 $\frac{1}{2}$ ֆնտի¹⁾: Յեվ ահա պարզվում և ֆունտի և կիլոգրամի մոտավոր առընչությունը՝

Մի կիլոգրամը=2 $\frac{1}{2}$ ֆնտի (քիչ պակաս):

Նկատեցեք, վոր այդ իմանալու համար կարիք չեղավ ստուգի վորին ազյուսակում: ինքներս հաշվեցինք դա մոքում՝ յենելով միայն մետրի և արշինի հիմնական հարաբերությունից ($1\frac{1}{2}$ արշին առանց $1\frac{1}{2}$ վերշոկի) և հիշելով, վոր ֆունտը 25 խոր, մատնաշափ ջրի քաշ ունի:

1) Եվեկ ճիշտը՝ $2\frac{2}{5}$ կամ 2.4. այս առնշանությամբ պետք է սպազմել ավելի ճիշտ հաշվումների համար:

կոտին ու մսխալին ի՞նչն և փոխարինում մետրական չափերում—կիլոգրամի մի 1000-րդ մասը, վորը կոչվում և գրամ: Կիլոգրամ անունը կազմված է յերկու բառից՝ կիլո և գրամ, ինչպես կիլոմետրը՝ կիլո և մետր: Կիլո—մեզ արգեն ծանոթ է, դա նշանակում է հազար, մյուսը՝ «գրամ»—այսպիս կոչվում է ծանրության այն փոքր¹⁾ չափը, վորը կիլոգրամի մի 1000-րդ մասն է:

Թանի վոր կիլոգրամը մոտավորապես հավասար է $2\frac{1}{2}$ ֆունտի, ուստի մի ֆունտը կլինի 1000: $2\frac{1}{2}=400$ գրամ: Այսուղից տեսնում ենք, վոր գրամը ծանրության շատ փոքր չափ է, 400 գրամին համապատասխանում է 96 մսխալ, ուստի 1 գրամը համարյա $\frac{1}{4}$ մսխալ է: Հենց այդ բանով ել հարմար և գրամը, վորովհետև քաշի ժամանակ ապատում և կոսորտակային թվերից—ի՞նչպես քառորդ, ութերրորդական ֆունտ և այլն: Խոկապես, $\frac{1}{2}$ ֆ. մոտ 200 գրամ է, $\frac{1}{4}$ ֆունտը մոտ 100 գրամ, $\frac{1}{8}$ -ը=50 գր., $\frac{1}{16}$ ֆ.=25 գր., $\frac{1}{32}$ ֆունտը, այսինքն 1 լոտը=12 գրամ, մսխալը=4 գրամ: Այս բոլորն ամբողջ թվեր են, զորոնցով շատ ավելի հեշտ ու հարմար է զործ անել, քան ֆունտի կոսորտակային մասերով²⁾:

Փութը քանի՞ կիլոգրամ է: Յերբ կիլոգրամը $2\frac{1}{2}$ ֆունտ է, ուրիշն 5 ֆ.=2 կիլոգրամի, իսկ 40 ֆունտը ութն անգամ ավելի շատ—16 կիլոգրամ է:

Մետրական սիստեմում շատ մեծ ծանրությունները չափում են մի խոշոր չափով, վորը կիլոգրամից մեծ է 1000 անգամ: 1000 կիլոգրամ պարունակող այդ չափը կոչվում է տոնն: Առանց զժվարության կարող ենք մտքում հաշվել, թե դա քանի փութ և—այնքան, վորքան անգամ 16-ը պարունակում է 1000-ի մեջ—կլոր թվով 60³⁾:

Դարձյալ յերկու զիստոպությունները՝ կիլոգրամը հավասար է 1 խ. զեցիմետր ջրի քաշին, իսկ քանի վոր խոր. զեցիմետրը 1000 խ. սանտիմետր է, ուստի 1 գրամը վոչ այլ ի՞նչ է, քան մի խոր. սանտիմետր ջրի քաշը: Ճիշտ նույն ձեռվ ել հեշտ և գտնել, վոր 1 տոննը 1 խոր. մետր ջրի քաշն է (խոր. մետրը=1000 խոր. զեցիմետրի):

1/2պետք և գրամը չփաթել զեղասան նման անսն սննիցող ծանրության նախկին չափի՝ զրանի նման: Մետրական գրամը մոտավորապես 16 անգամ ավելի ծանր և զեղասան զրանից:

2) Հազվի թի կարծիք լինի բացարձիք, թի ի՞նչպիսի հարմարության ունի կիլոգրամի առանորդական ստորաբանականը տասնորդական և հարյուրերրորդական կշռներով կշռելու ժամանակ. հաշվինքը չափազանց հեշտանում են:

3) Եթե առընչությունը ստանալու մյուս յեղանակը հետևյան է,

1 խոր. զեցիմետրը=60 խոր. մատնաշափի

1000 խոր. „ „ „ 60,000 խ. մատնաշափի

1000 խոր. „ „ „ ջրի քաշը=1 տոննի, իսկ 60,000 խ. զեցիմետրին՝ 60 ֆ. շիստական տաննը 60 փութ է:

Ահա այն բոլորը, վոր կարիք կլինի իմանալ ծանրության նոր չափերի մասին:

1 կիլոգրամը	=	$2\frac{1}{2}$ ֆունտ.
1 ֆունտը	=	400 գրամի.
$\frac{1}{4}$ »	=	100 »
1 փութը	=	16 կիլոգրամի.
1 տոննը	=	60 փթի.

Ավելացնենք միայն, վոր ասորյա կյանքում հաճախ, կարձա-թյան համար, «կիլոգրամի» փոխարեն ուղղակի ասում են «կիլո»:

15. ԴՐԻՅԼԻ ՓՈԽԱՐԵՆ ԼԻՏՐ.


Դարձյալ ինչ չափեր կան, վորպեսզի զննենք: Դրանք են հեղու-կային նյութերի (ինչպես որ, կաթ, նալթ և այլն) չափերը: Դույլերին շերի փոխարեն նոր սիստեմում հեղուկների համար դործածվում ե մի հիմնական չափ՝ լիտր: Մենք արդեն ծանոթ ենք դրան, վորովհետեւ ուրիշ անունով դա խոր. գեցիմետրն է: Լիտր մի զավար ե, վոր պարունակում ե ուղիղ մի կիլոգրամ ջուր, հետևապես ունի մի խոր գեցիմետր ծավալ (տես § 13): Ցերե ջուրը այսպիսի լիտրային գավա-թից ածենք մի գեցիմետր կողմնիր ունեցող խորանարդ արկղի մեջ վերջինը կցվի բերներերան:

Դժվար չե յեզրակացնել, թե ինչ առնչություն կա լիտրի և ուռ-ական գույլի ու շիթի միջին:

Բոլորին հայտնի յե, վոր մի գույլ ջուրը ունի 30 ֆունտ քաշ՝ սրանով ել ոգտվենք իմանալու, թե մի գույլը քանի՞ լիտր է: Գիտենք, վոր մի լիտր ջուրը կշռում է 1 կիլոգրամ կամ $2\frac{1}{2}$ ֆունտ: Բաժանելով 30-ը $2\frac{1}{2}$ -ի¹⁾, կիմանանք, վոր գույլը 12 լիտր է: Հետո՝ մի գույլը պարունակում է 20 շիթ (գարեջրի), ուրեմն, 20 շիթը՝ 12 լիտր, 5 շիթը՝ 3 լիտր, իսկ 1 շիթը լիտրից մոտ. $1\frac{1}{2}$ անգամ փոքր է: Բոլորս ել զի-տենք, վոր շիթը մոտավորապես 3 սովորական բաժակի, 5 շիթը (կամ 3 լիտրը)²⁾ 15 բաժակի, ուրեմն, լիտրը՝ 5 բաժակի յե հավասար:

Ասորյա կյանքում ավելի կարճ ձևով ել կարելի յե գտնենք վոր բաժակը լիտրի մի 5-րդ մասն և Մի գույլ ջուրը կշռում է 30 ֆ. և պա-րունակում 60 բաժակ, կնշանակի, մի բաժակ ջուրը կկշռի կամ ֆունտ կամ կիլոգրամի մի 5-րդ մասը. բայց մի կիլոգրամ ջուրը մի լիտր ծավալ ունի, հետևապես, բաժակը լիտրի մի 5-րդ մասն է:

¹⁾ Կամ, վոր նույն և, 60 բաժանում 5-ի, այս յեզրակը շատ հարմար և մասվոր հաշվի ժամանակ:



Այսպիսով, լիտրի և հեղուկ նյութերի հին չափերի միջև կարող ենք ցույց տալ հետեւյալ առընչությունը.

$$\text{դույլ} = 12 \text{ լիտրի}$$

$$\text{շլու} = 1^{1/2} \text{ անգամ փոքր և լիտրից.}$$

$$\text{բաժակը} = \frac{1}{5} \text{ լիտրի.}$$

Առողյա կարիքների համար արժեք հիշել վոր միջին թվով բաժակը պարունակում է 200 խոր. սանտիմետր (գարովհետեւ մի բաժակ ջուրը կշռում է 200 զրամ): Ցույց տանք նույնպես, վոր միջակ մեծության հայի գրալի պարունակությունը 12—15 խոր. սանտիմետր է, իսկ թեյին՝ 3—4 խոր. սանտիմետր: Այս թվերը հեշտությամբ կարելի յեւ ստուգել, յեթե նեղություն կրենք հաշվելու, թե քանի գումար կլցնի բաժակը:

16. ԿՇՈՒԵԼՆ ԱՌԱՆՅ ՔԱՐԵՐԻ ՈՒ ԿՇԵՐԵՔԻ

Մնաբական չափերի գործածությունը հաճախ հնարավորություն է տալիս կշռելու առանց կշռոքի և քարերի ոգնության, միայն ծավալների չափումնիվ: Շատ հասարակ ձեռվ կարմիր յեւ ջուրը կշռելու որինակ, 50 խոր. դեցիմետր մեծության ամանի ջուրը կշռում է 50 կիլոգրամ: Յեթե գորոշեք մի լճակի ծավալը, վոր դա 10,000 խոր. մետր է, ապա ուրեմն ջրի քաշը 10,000 տոնն և կամ 600,000 փութ: Մի խոր. սաժենն ջուրը կշռում է այսքան, վորքան 10 խոր. մետրը (\S 11), այսինքն՝ 10 տոնն կամ 600 փութ և այլն:

Յեթե մենք գործ ունենք վաչ թե ջրի, այլ ուրիշ նյութերի, որին անկ, փայտի, յերկաթի հետ, առաջանց քաշը ծավալով վորոշելու համար պետք է իմանալ միայն, թե այդ նյութերը քանի անգամ ավելի ծանր կամ թեթև են ջրից, այլ խոսքով այն, ինչ վոր զիտության և տեխնիկայի մեջ կոչվում են նյութերի «թանձրություն»: Արինակ, յերկաթը 8 անգամ ավելի ծանր ($\langle\beta\alphaն\delta\rangle$) և ջրից, վորեն յերկաթյա իր 8 անգամ ավելի ծանր է, քան նույն մեծության ջրայինը. Այդ բանը հնարավոր և գալձնում առանց կշռի հեշտությամբ վորոշելու յերկաթյա քառանկյուն ձողերի, շերտերի, սալմրի և թերթերի քաշը: Արինակ, 1 մետր յերկարություն, 2 սանտիմետր հաստություն և 3 սանտ. լայնություն ունեցող յերկաթյա քառանկյուն ձողը սարունակում է 600 խոր. սանտիմետր յերկաթ, ամեն մի խոր. սանտ. յերկաթյա 8 անգամ ավելի յեւ կշռում, քան մի խոր. սանտ. ջուրը, այսինքն կշռում է 8 զրամ. Հետեւարիս, այդ ձողը կշռում է $8 \times 600 = 4800$ զրամ, կամ մոտ 12 փունա (4800 : 400 = 12):

Մի որինակ եւս Պղինձը ջրից ծանր և 9 անգամ, որինի 1 խոր. սանտ. ողջինձը կշռում է 9 զրամ: 60 սանտ. յերկարություն, 50 սան-

տիմեար լայնություն և 2 միլիմետր հաստություն ունեցող պղնձաթերթի ծավալը $600 \times 500 \times 2 = 600,000$ խոր. միլիմետր և կամ 600,000 : 1000 = 600 խոր. սանտ. Դրա քաշը = $9 \times 600 = 5400$ գրամի կամ մոտ. $13\frac{1}{2}$ գունդի: Սուսու չոր փայտը 2 անգամ թեթև և ջրից: Ռւրեմն, 4 մետր յերկարության և 2 զեցիմետր հաստության, այսինքն 160 խոր. զեցիմետր ծավալ ունեցող քառակուսի գերանը պետք և կշռի $\frac{1}{2} \times 160 = 80$ կիլոգրամ կամ 5 գութ ($80 : 16 = 5$): Չոր սոնու փայտի կիսաշշինային սաժենը ($\frac{1}{6}$ խ. սաժ.), վորը պարունակում և համարյա ճիշտ 1 խոր. մետր զուտ փայտային մասեր, պետք և կշռի կես տոնն կամ մոտ. 30 գութ:

Առանց կշռոքի կշռելու համար բերենք մի քանի գործածական հյութերի «թանձրության» փոքրիկ աղյուսակ.

Վուկի	20	Ցինկ	7
Սուզիկ	14	Անագ	»
Արձիճ	11	Ապակի	3
Արծաթ	10	Թար	3
Պղինձ	9	Սոնու փայտ	$\frac{1}{2}$
Ցերկաթ.	8	Խցան	$\frac{1}{4}$

Այս թվերը ցույց են տալիս, թե հիշված նյութերից յուրաքանչյուրի մի խոր. սանտիմետրը քանի գրամ և կշռում, կամ մի խոր. զեցիմետրը՝ քանի կիլոգրամ (կամ, վերջապես, խոր. մետրը քանի տոնն և):

Ողավելով մտքում հեշտ պահպող այս աղյուսակով և մետրական սիստեմի չափերի հատկություններով, կարելի յե մարմնի ծանրությունը հաշվել վոչ միայն ծավալով, այլև, ընդհակառակը, մարմնի ծավալը քաշի միջոցով, Առենք, որինակի համար, հարկավոր և իմանաւ թե մի փութ յերկաթն ինչ ծավալ ունի: Փութը — 16 կիլոմետր և, յեթե հարցը վերաբերեր վոչ թե յերկաթին, այլ ջրին, այդ դեպքում 16 կիլոգրամի ծավալը կավասարվեր 16 խոր. զեցիմետրի: Վերելի աղյուսակում տեսնում ենք, վոր յերկաթը ջրից «թանձր» և 8 անգամ և, հետեւապես, 16 կիլոգրամ յերկաթը պետք և 8 անգամ պակաս ծավալ ունենա, այն և 2 խոր. զեցիմետր:

Վերջապես, կարելի յե լուծել և այսպիսի խնդիրներ: «Տանիքի մի յերկաթաթերթ, վորի յերկարությունն և $1\frac{1}{2}$ արշ, և լոյնությունը՝ 1 արշ., կշռում և 14 գունտ. իմանալ՝ ինչ հաստության և այդ թերթը»: Գտնենք նախ թերթի ծավալը, 14 գունտը = $14 \cdot 400 = 5600$ գրամի: Հետեւապես, այդ յերկաթաթերթի ծավալը $5600 : 8 = 700$ խոր. սանտ.: Թերթի մակերեսն և 100 սանտ. $.70 = 7000$ քառ. սանտ.: Յեթե մակերեսը բազմապատճենք թերթի անհայտ հաստությամբ, այդ գետքում կատանանք ծավալը՝ ճիշտ 700 խոր. սանտ.: Ռւրեմն, վորպեսզի գըտ-

նենք անհայտ հաստությունը, պետք և ծավալը բաժանենք մակերեսով: 700 խոր. սանտ. 7000 քառ. սանտիմետրի վրա բաժանելով կատանանք $\frac{1}{10}$ սանտ. կամ 1 միլիմետր. ուրեմն և թերթի հաստությունը հավասար և 1 միլիմետրէ:

Ի հարկե, նման հաշվումներ հնարավոր և անել և ոռւսական չափերով, սակայն մետրական չափերով չափազանց պարզանում և հեշտանում են զրանք:

17. ԴԱՐՁՅԱԼ ՄԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ

Մետրական չափերի ասմանորդական ստորաբաժանումները բավական հեշտացնում են վոչ միայն զրանց գումարումն ու հանումը (ինչպես ցույց տվեցինք § 1-ում), այլ հաճախ և բազմապատկումն ու բաժանումը: Անա յերբ հարկավոր և մետրական չափերի վորեւ թիվ բազմապատկել $10, 100, 1000$ անգամ և այլն, հաճախ այդպիսի զեպքերում բազմապատկում են վոչ թիվն-ինքը, այլ միայն չափը, այսինքն մի չափը փոխարինում են մյուսով, վորը $10, 100, 1000$ անգամ ավելի մեծ և (իսկ այդպիսի հարմար չափ հաճախ պատահում է):

$$17 \text{ գրամ} \times 1000 = 17 \text{ կիլոգրամի}$$

$$83 \text{ սանտ.} \times 100 = 83 \text{ մետրի}$$

$$49 \text{ մետր} \times 1000 = 49 \text{ կիլոմետրի}$$

$$23\frac{3}{4} \text{ կիլոգրամ} \times 1000 = 23\frac{3}{4} \text{ տոննի}$$

Փոքր չափն ավելի մեծին անդրադարձնելը կարելի յե յերկու նվազով կատարել, յեթե միանգամբ անելը գտնուար և, Որինակ:

$$59\frac{1}{3} \text{ սանտ.} \times 100,000 = 59\frac{1}{3} \text{ մետրի} \times 1000 = 59\frac{1}{3} \text{ կիլոմետրի}$$

$$31,6 \text{ միլիմետր} \times 1,000,000 = 31,6 \text{ մետրի} \times 1000 = 31,6 \text{ } \text{ }$$

$$173\frac{1}{4} \text{ գրամ} \times 1,000,000 = 173\frac{1}{4} \text{ կիլոգր.} \times 1000 = 173\frac{1}{4} \text{ տոննի}$$

Համապատասխան գեալքերում նման ձևով կատարվում և նաև բաժանման գործողությունը, Որինակ:

$$213 \text{ կիլոգր.} : 1000 = 213 \text{ գր.}$$

$$44\frac{1}{2} \text{ կիլոմետր} : 100,000 = 44\frac{1}{2} \text{ մետրի} : 100 = 44\frac{1}{2} \text{ սանտ.}$$

$$19,7 \text{ տոննի} \text{ մի միլիոներորդ մասը} = 19,7 \text{ կիլոգր.} : 1000 = 19,7 \text{ գր.}$$

Տոկոսային մասերի հաշվումն ել շատ գեալքերում չափազանց հեշտանում և, Որինակ զանել 62 մետրի 7^0-ը , $1^0\text{/}_0 = 62$ սանտ., իսկ $7^0\text{-ը} = 62 \cdot 7 = 434$ սանտ. կամ $4,34$ մետրի, Գտնել 12 տոննի 5^0-ը , $1^0\text{/}_0 = 120$ կիլոգրամի, իսկ $5^0\text{/}_0 = 600$ կիլոգրամի և այլն:

Հաշվումների այս պարզությունն ու հարմարությունը՝ մետրական չափերի թանակարժեքությունն և մյուս բոլոր ականակի չափերից և զրա համար ևլ ցավալի չե կտրվել թեպետ ընտանի, սակայն վոչ ձեռուն հայրենի չափերից:

18. ՏԱՎԸ ՆՈՐ ԲԱՌԵՐ ՅԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Նոր չափերի մասին մենք այժմ գիտենք այն բոլորը, ինչ վոր կարող ե հարկավոր լինել առորյա կյանքում, ինչպես առոնում եք, մետրական սիստեմի չափերի յուրացման համար շատ քիչ բան և պետք մտքում պահելու, ավելի շատ խորհելով, քան հիշողությամբ: Իրոք, զործ ունենք ընդամենը միայն հինգ հիմնական չափերի հետ, վորոնց անունները հարկավոր ե մտքում պահել.

Մ ե տ ր

Գ ր ա մ

Ա ր

Լ ի տ ր

Տ ո ն ն

Նաև հինգ ոտարազգի բառեր—կիլո, հեկտո, դեցի, սանտի յև մետր, վորոնք նշանակում են—

Կիլո—հազար

Հեկտո—հարյուր

Դեցի—տասերորդ (մաս)

Սանտի—հարյուրերորդ »

Միլի—հազարերորդ »

Մտքում հեշտությամբ պահպող այս 10 կարճ բառերից շատ անարվիստորեն ու վոչ շինծու կազմվում են նոր սիստեմի բոլոր չափերի անունները, որինակ.

Կիլոմետր — 1000 մետր

Դեցիմետր — մետրի 10-րդ մասը

Սանտիմետր — » 100-րդ »

Հեկտար — 100 ար

Հեկտոլիտր — 100 լիտր

Դեցիլիտր — լիտրի 10-րդ մասը

Միլիլիտր — լիտրի 1000-րդ մասը և այլն:

Ցույց տանք նույնպես, թէ ինչպես և ընդունված թուսատաշում կրճատ նշանակել մետրական չափերի անունները (համաձայն «Չափերի և Կշիռների Գլխավոր Պալատի» վորոշման)

Կիլոմետր — կմ

Մետր — մ

Դեցիմետր — դմ

Սանտիմետր — սմ

Միլիմետր — մմ

Հեկտար — հա

Ար — ա

Տոնն—Տ

Կիլոգրամ—կր

Գրամ—գ

Միլիգրամ—մգ

Լիտր—լ

Այս բոլոր կրճատ նշանակրծները զրվում են թվերից հետո և առանց վորեւ կետադրության: Որինակ 8 կմ, 17 ր, 4 ր (բայց վոչ թի 8 կմ, 17 ր, 4 ր): Համախ միենուցն կրճատումները արտահայտում են լատինական այրութենի համապատասխան տառերով:

Քառակուսի յեվ խորանարդ բառերի փոխարեն կրճատ արտահայտության վերել՝ աչ կողմում, զնում են 2 թվանշանը քառակուսի չափերի, իսկ 3-ը՝ խորանարդների համար (որինակ, և² նշանակում ե քառ, մետր, և³—խոր, սանտիմետր):

19. ԲԵՐԱՆԱՑԻ ՄՈՏԱՎՈՐ ՀԱՇԻՎ

Ավելի ևս քիչ ե կարիք լինում ծանրաբեռնել հիշողությունը՝ այդ նոր չափերը մեզ ծանոթ հներին վերածելիս և ընդհակառակը: Տեսաք, վոր մետրական սիստեմի ուղածդ ամեն մի չափ բերանացի, առանց զրշի ու թղթի, նույն իսկ չդիմելով վորեւ աղյուսակի, վերածեցինք սուսականին:

Ճշմարիտ և, միայն մոտավորապես ուզիղ պատասխաններ են ստացվում, սակայն չե՞ վոր չի կարելի հաշվումների ժամանակ առանց այլայլության կլորացնել թվերը: Բայց ասորյա կյանքում հաճախ ամենեին հարկ չի լինում միանդամայն ճիշտ վերածել չափերը, այլ պահանջվում է միայն միտ բերել, վոր մոտավորապես այսքան ֆունտերին հավասար են այսքան կիլոգրամներ: Հենց այդպիսի բերանացի հաօգումների համար ել հարկավոր կիրակ սույն զրքույկը: Իսկ ավելի ճիշտ հաշվումների համար պետք ե ոդունել զրքույկի վերջում կցված ավելի անսխալ առընչությունների աղյուսակից:

20. ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Շուտով կտարածվեն մեզնում մետրական սկստեմի չափերը: Անկառած, այսո, վորովհետեւ դրան նպաստում են մի շաբթ յերջանիկ զուգաղիպություններ: Նախ ինչպես տեսանք, ուստական և մետրական տարածային հիմնական միավորների միջև կան չափազանց պարզ ու հեշտ մտաբերելի առընչություններ, ինչպես—

1 գծայինմետրը = $1\frac{1}{2}$ արշ. առանց $1\frac{1}{2}$ վերշոկի¹⁾

1 քառ. մետրը = 2 քառ. արշինի

1 խոր. մետրը = խոր. սաժենի 10-րդ մասին.

Նմանապես չափազանց պարզ, թեպետ վոչ այնքան ճշգրիտ և ծանրության չափերի առընչությունը.

քառորդ ֆունտը = 100 դրամի:

Այսուհետեւ, գիտենք, զոր արշինն ու մետրը շատ հարմար ձևով կապված են իրար մի պարզ ֆիզուրով, վորտեղ հեշտությամբ կարելի յեւ արշինի ոգնությամբ գտնել մետրի յերկարությունը, չիմանալով անդամ այդ չափերի թվական առընչությունը (գծ. 1):

Վերջապես, մետրական սիստեմը մեկնում հաջողությամբ գործարելու, առորյա կյանքում արագ մուծելու համար, անկասկած, կոժանակակեն նույնական գրասենյակաշին համեմիշները, վորոնք անհայտ են Արևմուտքում: Ռուսական «հաշվիմեքենան» շատ լավ հարմարեցրած և կատարելու հենց տասնորդական չափերի ամեն տեսակ գործողություններ:

Բարեհաջող պայմանների այսպիսի մի յերշանիկ գուգաղիպություն, հավանութեն, չի յեղել վոչ մի յերկում, անդամ մետրական սիստեմի ծննդապայրը Ֆրանսիայում:

ԱԼՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ստորև զետեղված են չափերի յերկու աղյուսակներ, մեկը ցույց է տալիս այն ամենապարզ առընչությունները, վորոնք հարմար են բանագոր արագ հաշվիմերի համար, յերբ չի պահանջվում մեծ ճշտություն. մյուսը ցույց է տալիս ավելի ճիշտ առընչությունները զրագոր հաշվությունների համար: Առաջինն աղյուսակում թվերը բերված են զանազան ճշտությամբ. մի քանիսը միայն իրենց արտաքին պարզության պատճառով պատճարար աչքի յեն ընկնում մեծ ճշտությամբ (մետրը = $22\frac{1}{2}$ վերշ., վերսորը = $1\frac{1}{15}$ կիլոմետրի), մյուսների անճշտությունները հասնում են մի քանի տոկոսի: Յերկորդ աղյուսակի թվերում անճշտությունները վոչ մի տեղ $1^{\circ}/_0$ -ից ավելի չեն²⁾: Առորյա կարիքների համար ավելի մեծ ճշտություն ընդհանրապես չի պահանջվում:

¹⁾ Ով մատնաշափերին ամելի յերնակացած, քան վերշուներին, նրան ձեռնոտ կինի փոխանակ բերված առընչության մարզում պահել մի ուղիղ, նույնը պարզ ու հարմար, թեպետ պահան ճշգրիտ՝ 40 մատնաշափի:

Սյոսեղից գժվար չեւ յեպակացնել ուստի և մետրական չափերի միջն յեղած մյուս բոլոր մատնափառ առընչությունները ներկնք որինակներ. 1 մետրը = 100 սանտ. = 40 մատնաշափի, վորից հնակում են, վոր 1 մատնաշափը = $2\frac{1}{2}$ սանտ. և զեցիմետրը = 4 մատնաշափի: Այնուհետեւ՝ 1 արշ. = 28 մատնաշափի = $\frac{28}{10}$ մետրի = $\frac{7}{10}$ մետրի և ընդհակառակը = 1 մետրը = 40 մատնաշափի = $\frac{40}{29}$ արշ. = $\frac{10}{7}$ արշ. = $\frac{1}{4}$ արշ. կամ 1 սանտ. = 84; 40 = 2,1 մետրի և այլն:

²⁾ Յերեկմն զրանից ել ավելի քիչ, որինակ՝ մատնաշափը = 2,54 սանտ.՝ առընչությունը բոլորովին միշտ ե:

ՈՒԽՍԱԿԱՆ ՅԵՎ ՄԵՏՐԱԿԱՆ ԶԱՓԵՐԻ ԱՌԸՆՉՈՒԹՅԱՆ

ԱԼՅՈՒՍԱԿՆԵՐԸ

ԱՄԵՆԱՊԱՐՀ ՄՈՏԱՎՈՐ ԱՌԸՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Բանավոր հաշվումների համար)

ՄԵՏՐԱԿԱՆ ՀԱՓԵՐ

Կիլոմետր = 1000 մետրի = $15\frac{1}{16}$ վերսոր
= 470 սանտինի.

Մետրը = $22\frac{1}{2}$ վերշ. = 40 մատնաշափի
Դեցիմետրը = 4 մատնաշափի

Քառ. մետրը = 2 քառ. արշինի

Հեկտարը = $10,000$ ք. մետրի = $11\frac{1}{12}$ դեյտինի

Արը = 100 ք. մետրի = 22 ք. սանտ.

Խոր. զեցիմետրը = խոր. սամենի

10-րդ մասին = $2\frac{3}{4}$ խ. արշ. = 35 խ.
վոտնաշափի

Խոր. դեցիմետրը = 60 խոր. մատն. =
= 11 խոր. վերշուկ.

Կիլոգրամը = 1000 գրամի = $2\frac{1}{2}$ ֆ.

Տոննը = 1000 կիլոգրամի = 60 փթի.

Գրամը = $\frac{1}{4}$ մատնալի:

Լիտրը = $\frac{1}{12}$ դույլի

ՄՈՒԱԿԱՆ ՀԱՓԵՐ

Վերսորը = $1\frac{1}{15}$ կիլոմետրի
Արշինը = 70 սանտ.

Վառնաշափը = 30 սանտ.

Վերշուկը = $4\frac{1}{2}$ սանտ.

Մատնաշափը = $2\frac{1}{2}$ սանտ.

Քառ. արշ. = $\frac{1}{2}$ քառ. մետրի
» սանտ. = $4\frac{1}{2}$ » »

» վոտն. = 9 » մատնաշ.

» վերշ. = 20 » սանտ.

» մատն. = 6 » »

Դեսյատինը = $1\frac{1}{11}$ հեկտարի

Խոր. սամենը = 10 խոր. մետրի
» վոտն. = 30 խ. զեցիմետրի:

» մատն. = 16 խ. սանտ.

Ֆունտը = 400 գրամի

Մսիալը = 4 »

Փութը = 16 կիլոգրամի

Դույլը = 12 լիտրի

ԱՌԵՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1⁰/₀-ի 8 ՎՐ ԱՎԵԼԻ ԱՆՁՆՏՈՒԹՅԱՄԲ
(ԳՐԱՎՈՐ ԽԱԾՎՈՂՄՆԵՐԻ ԽԱՄԱՐ)

ՄԵՏՐԱԿԱՆ ՀԱՓԵՐ	ԲՈՒԱԿԱՆ ՀԱՓԵՐ
Կիլոմետրը — 0,94 վերաբի Մետրը — 0,47 սաժ. — 1,4 արշ. Դեցիմետրը — 3, 9 մատն. — 2,25 վերը.	Վերաբը — 1,07 կիլոմետրի Արշինը — 71 սանտ. Վուն. — 30,5 սանտ. Վերշողը — 4,5 սանտ. Մատնաչ. — 2,54 սանտ.
Քառ. մետրը — 0,22 ք. սաժենի — 1,98 ք. արշ. Հեկտարը — 0,92 դեսյատինի — 2,200 քառ. սաժենի Արը — 22 քառ. սաժենի	Քառ. արշ. — 0,51 քառ. մետրի » սաժ. — 4,55 » » » վուն. — 9,30 » դեցիմ. » վերշ. — 20 » սանտ. » մատն. — 6,4 » »
Խոր. մետրը — 0,103 խոր. սաժ. — 2,78 խ. արշ. — 35,3 խոր. վուն. Խոր. դեցիմետրը — 61 » մատնաչ. — 11,4 խոր. վերշողի	Խոր. սաժենը — 9,7 խոր. մետրի » վուն. — 28,3 » » » մատ. — 16,4 » սանտ. տիմետրի
Կիլոգրամը = 2,44 ֆնտի Տոննը = 61 փթի	Ֆունը — 410 գրամի Մոխալը — 4,3 » Գութը — 16, 4 կիլոգրամի, 0,016 տոննի
Լիտրը = 0,081 դույլի	Գույլը — 12,3 լիտրի
1 Գրամը = 1 խոր. սանտ. ջրի քաշին 1 կիլոգրամը = 1 խ. դեց. » »	1 տոննը = 1 խ. մետր ջրի քաշին 1 լիտրը = 1 » դեցիմ. » »

ԱՐԺԵ ՄՏՔՈՒՄ ՊԱՀԵԼ

- 1 մետրը = 22¹/₂ վերշողի կամ 40 մատն.
1 քառ. մետրը = 2 քառ. արշինի
10 խոր. մետրը = 1 խոր. սաժենի
400 գրամը = 1 ֆնտի
1 կիլոգրամը = 2¹/₂ ֆնտի
16 » = 1 փթի
1 տոննը = 60 փթի



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

bջ.

Առաջաբան	3
1. Նոր չափերի առավելությունները	5
2. Այս գրքույկի նպատակը	6
3. Արշինի փոխարեն մետր	7
4. Յերջանիկ զուգադիպություն	9
5. Վերշոկի և մատնաչափի փոխարեն	10
6. Մետրն ու դեցիմետրը միշտ մեղ մոտ են	13
7. Լուց կի	13
8. Վերստի փոխարեն կիլոմետր	14
9. Քառակուսի մետր	15
10. Քառակուսի սանտիմետրը	19
11. Դեսյատինի փոխարեն հեկտար	19
12. Խորանարդ մետր	21
13. Խոր. սանտիմետր և դեցիմետր	22
14. Ֆունտի փոխարեն կիլոգրամ	25
15. Դույլի փոխարեն լիտր	28
16. Կշռելն առանց քարերի ու կշռերի	31
17. Դարձյալ մի առավելություն	33
18. Տաս նոր բառեր և դրանց բացատրությունը	34
19. Բնըանացի մոտավոր հաշիվ	35
20. Յեղակացություն.	35
21. Ալյուսակների վերաբերյալ	36



Հ. Ա. Խ. Հ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴԱՑՈՒՑԱԾԱՐԺԱԿԱՑՈՒՅԹ ՍԵՐԻԵ

1. Ա. ՇՏԵՂՋԱՎՈՒԳ—Դասարան՝ Լաբորատորիա-ներ թարգ. Ա. Բ. (հջ 78), 1924 թ. Յերևան ։ » — լ. 50 կ.
2. ՄԵՐՈՂՋԱԿԱՆ ԸՆԴԱՎԱԾՈՒ—Ճեմնարկ. (հջ 128), Յերևան 1934 թ. » — լ. 90 կ.
3. ԳՐԱՄԱՏԻՂԱԳԻԱՆ 1° ԴՐԱԳՈՎՈՒՄ, թարգմ. Շա-վարշյանի (16 հջ). » — լ. 10 կ.
4. ~~ԴՐԱ ԱՆ ԱՇԽԱՏԻ ԿԱՐԵՐԸ (ՃԵՄՆԱՐԿ)~~ (160 հջ), 4924 թ. Յերևան » — լ. 50 կ.
5. Ա. ՄԵՐԵՂՋԱՆ—Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության (16 հջ), 1922 թ. Յերևան. » — լ. 8 կ.
6. Ա. ՄՈՒԾԵՂՋԱՆ—Խնչպիս կազմի հերթարիում (16 հջ), 1922 թ. Յերևան » — լ. 10 կ.
7. Յա. ՊԵՐԵԶՄԱՆ—Հին և նոր չափերը, թարգմ. Շավարշյանի (40 հջ) Յերևան. » — լ. 45 կ.

Գ. Ա. Խ. Հ. 45 Կ. Ա. Պ.

